

ԹՈՒՄԱՆՅԱՆԱԿԱՆ ՊԱՏՈՒՄ ՅՈՒՐԱԳԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՄ

Լ Գ. ԳԱՐՐԻԵԼՅԱՆ

Ո՞ւմ են հասցեագրված Թումանյանի հեքիաթները: Մի առիթով հեղինակն անդրադարձել է այս հարցին. «Մենք չենք կարող գրողներին պատվիրել, թե գրեցե՞ք էսքան կամ էնքան տարեկան երեխի համար: Ես ինքս գրող եմ, մանկական գրվածքներ գրելիս երբեք չեմ մտածում, թե քանի տարեկանի համար է նա: Քանի տարեկանն ուզում է թող կարդա, ինչ հասակի համար կլինի, թող նրան տամ: Բոլոր հասակներին հարմար կլինի, ավելի լավ: Չենք կարող սահմանավորել»¹:

Թումանյանն այն սակավաթիվ գրողներից է, որ ուղեկցում է մարդուն ողջ կյանքի ընթացքում: Պարզ սյուժեի ետևում (մանուկ ընթերցողի համար՝ սոսկ զվարճալի, հրաշապատում պատմություն) թաքնված է փիլիսոփայական ընդհանրացումներ պարունակող ենթատեքստ, որը հասանելի է միայն առավել հասուն տարիքի ընթերցողին: Թումանյանի հեքիաթների ընկալումը պայմանավորված է ընթերցողի աշխարհայացքով ու մտահորի-զոնով:

Այնուամենայնիվ, դրանք պայմանակաճորեն կարելի է բաժանել տարիքային տարբեր խմբերի միջև: Հետաքրքիր է՝ ինչպես է այդ հանգամանքն արտահայտվել հեքիաթներում ոչ միայն առանձին բառերի ու պատկերների, այլև հեքիաթային պատումի լեզվի, ռիթմի, սյուժեի շնորհիվ:

Կրտսեր մանկական տարիքի համար գրված հեքիաթները չորսն են՝ «Ծիտը», «Ուլիկը», «Ճամփորդները», «Պռչատ աղվեսը»: Դրանք բնորոշ է պարզ և մատչելի լեզուն, սյուժեն խճճված չէ գործողությունների բազմազանությամբ: Բոլորն էլ կենդանական հեքիաթներ են, ուր գործող «անձերը» փոքրիկների համար այնքա՞մ սիրելի կենդանիներն են:

«Պռչատ աղվեսը» մի զվարճալի պատմություն է խորամանկ ու ճարպիկ աղվեսի մասին, որը հնարամտությամբ իր գործն առաջ է տանում: Փոքրիկները սիրով են կարդում կամ լսում այս հեքիաթը պարզ ու պատկերավոր լեզվի, անընդհատ իրար հաջորդող գործողությունների ու հեքիաթի սկզբից մինչև վերջ ծավալվող երկխոսությունների շնորհիվ, որոնք պատումին յուրահատուկ աշխուժություն են հաղորդում: Այս հեքիաթի (ինչպես նաև «Ծիտը» հեքիաթի) բնորոշ հնարանքը շարադրանքը որևէ վիճակի աստիճանական խորացման սկզբունքով զարգացնելն է (զրադացիա): Այն ունի երկու նպատակ: Կախ՝ սահմանափակ աշխարհայացքի տեղ մանուկ ընթերցողին կամ ունկնդրին տարբեր երևույթների հետ ծանոթացնելու նպատակ է հետապնդում, ապա՝ մանկան հիշողությունը մարզելու և զարգացնելու յուրօրինակ միջոց է: Փոքրիկը փորձում է մտապահել որևէ վիճակի աստիճանական խորացման հերթականությունը: Օրինակ՝ «Հավիկ-հավիկ, ծուծու տուր, ծուծուն տանեն չարչուն տամ, չարչին ինձ ուրունք տա. ուրունքը տանեն աղջկան տամ, աղջիկը ինձ կուժ տա. կուժը տանեն աղբյուրին տամ, աղբյուրը ինձ ջուր տա. ջուրը տանեն արտին տամ, արտը ինձ խոտ տա. խոտը տանեն կովին տամ, կովը ինձ կաթ տա. կաթը տանեն պատավին տամ, պատավը պոչս տա. կցեն, կցնցեն, զնամ բնկերներինս հասնեն, որ ինձ չասեն՝ պոչատ աղվես, որտե՞ր էիր» (ն. V, էջ 212):

¹ Հ. Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու, 10 հատորով, Եր., 1988-1999, հ. 6, Եր., 1994, էջ 538:

Հեքիաթում Թումանյանն օգտվել է պարզ արտահայտչամիջոցներից: Չկան բնության տարբեր տարրերի ու երևույթների հետ կատարված ծավալուն համեմատություններ, որոնք բնորոշ են Թումանյան - հեքիաթագրին, փոխաբերություններ ու չափազանցություններ, նվազագույնի է հասնում նաև մակդիրների թիվը: Սակայն հեքիաթը ողողված է հարակրկնություններով, որոնք, հանգավորված լինելով, յուրօրինակ դիժմ են ստեղծում և նպաստում փոքրիկների կողմից հեքիաթը հեշտ մտապահելուն: Այս առումով և՛ հեղինակի խոսքը, և՛ հեքիաթների հերոսների պահանջը, և՛ աղվեսի խնդրանքը ամեն անգամ կրկնվում են մեկ բառի փոփոխությամբ, ինչպես՝ «Պատավն ասում է», «Աղբյուրն ասում է», «Չարչին ասում է», «Հավն ասում է» և այլն, կամ՝ «Աղվեսը գնում է կովի մոտ», «Աղվեսը գնում է արտի մոտ», «Աղվեսը գնում է չարչու մոտ», «Աղվեսը գնում է աղջկա մոտ» և այլն: Մանկական այս հեքիաթում հեղինակը որոշ բառեր փաղաքջական ձևով է օգտագործել, ինչպես՝ կովիկը, արտիկը, հավիկ-հավիկը:

Կրտսեր մանկական տարիքի համար գրված հեքիաթներն առանձնանում են նաև այլաբանության խրատական-բարոյախոսական միտումով, ուսուցողական բնույթի են: Վերոհիշյալ հեքիաթը մանուկներին հուշում է, որ նպատակին հասնելու համար ջանք չխնայելու միջոցով կարելի է դուրս գալ ցանկացած անելանելի իրավիճակից:

Գեղարվեստական յուրահատկություններով «Պոչատ աղվեսը» հեքիաթից քիչ է տարբերվում «Ծիտը», որը փոքրիկներին պատմում է զվարճասեր փոքրիկ արարածի՝ ծտի մասին: Այստեղ էլ հեղինակն օգտվել է գրադաջիայից: Հեքիաթում կիրառված ուղղակի խոսքը, ծտի՝ մի բառի փոփոխությամբ պատասխանները նպաստում են փոքրիկների հիշողության զարգացմանը: Նրանք լարում են իրենց հիշողությունը՝ դեպքերի հաջորդականությունը մտապահելու համար: Փոքրիկներն ակնատեսն են դառնում «համդուզն» ծտի համարձակ քայլերի՝ արկածների: Իհարկե, հեքիաթում կան բնորոշ չափազանցություններ (փոքրիկ ծիտը զառնուկին, հարսին, սագիկը՝ ծավալով իրենից բազմապատիկ մեծ առարկաներն առնում է ու թռչում), սակայն փոքրիկների ամսանձ երևակայությամբ խորք չեն դրանք, և դրանցից հեքիաթն ավելի հետաքրքիր է դառնում:

Այս հեքիաթն էլ է աչքի ընկնում բովանդակության, էզովի ու արտահայտչամիջոցների պարզությամբ: Այդտեղ էլ հեղինակն օգտագործել է նվազական, փաղաքջական նշանակությամբ գոյականներ, որոնք հոգեհարազատ ու հասկանալի են փոքրիկներին, ինչպես՝ փուշիկ, լոշիկ, գառնիկ, հարսիկ և այլն: Պատումին յուրօրինակ աշխուժություն են հաղորդում հարակրկնությունները:

Կրտսեր մանկական տարիքի համար Թումանյանի գրած հեքիաթները եղել են ժամանակի քննադատության ուշադրության կենտրոնում: «Նոր դպրոց» ամսագրում, խոսելով «Մանկական գրադարան» մատենաշարով Թումանյանի հրատարակած հեքիաթների մասին, Հովհաննես Տեր-Միքայելյանը գրել է. «Թումանյանի «Աղվեսը», «Ծիտը», «Անհաղթ աքլորը» և «Ուլիկը» իսկապես ասած պատկերազրքեր են, որոնք տրվում են մանուկներին նախադպրոցական կյանքում իբրև զվարճալիք: Մինչև հիմա մեր ընտանիքներում հազարավոր օրինակներով տարածվել են մեծ մասով թե՛ բովանդակությամբ և թե՛ պատկերներով անճաշակ ռուսերեն գրքույկներ «լուբոշնի» հրատարակությունից: Այժմ մեր ձեռքի տակ եղած հայերեն պատկերազրքերը ոչ միայն բարձր են այդ արտադրություններից, այլև կարող են մրցել ռուսական ավելի արժանավոր գրականության արտադրությունների հետ: Այս պատկերազրքերի մեջ բանաստեղծական շնորհքին միացած ենք տեսնում նկարչական շնորհքը, որը այնպես սքանչելի հումորով ներկայացնում է կենդանական ու մարդկային կյանքի ներքին շարժառիթները»²:

Անդրադառնալով «Ծիտը» հեքիաթին՝ գրախոսը նշում է. «Արկածախնդիր, իր ուժից չափազանց վեր քաջագործություններով քնավ անհավատալի չի մնա 3 - 5 տարեկան

² «Նոր դպրոց», Թիֆլիս, 1909, № 6 / 7, էջ 114 - 116:

մանուկներին, մանավանդ, երբ նրա արկածները հաստատում են սազը՝ «Ծընգը, մընգը ...» անելով, ճտվտալով երգելով: Գրավիչ պատկերն էլ այդ վկայում է»¹:

Թունանյանն ինքն էլ «Ծիտը» համարել է մանկական զվարճալի հեքիաթ՝ չդասելով այն իր «լուրջ» հեքիաթների շարքը, ինչպիսիք են Քրիմսկի՝ «Քաջ Նազարը», «Ոսկու կարասը», «Եղենական ծաղիկը» և այլն:

Հեղինակն ուղղակիորեն չի արտահայտվել այդ մասին, բայց դա կարելի է եզրակացնել Դրամբյանին ուղղված հետևյալ խոսքերից. «Եվ գուր եք կարծում դուք և ձեզ նման Դրամբյանները, թե ես իմ էդ գործերով շատ եմ ինքնագոհ ու մեծ բաներ եմ համարում: Մեծ բաներ են, այո՛, բայց ոչ ձեզ համար. և ձեր խելքը հազիվ թե «Ծոխն» էլ հասնի, իսկ ինձ համար - երբեք» (հ. V, էջ 167):

«Ուլիկը» և «Ճամփորդները» իրենց գեղարվեստական յուրահատկություններով Եսայես չեն տարբերվում վերոհիշյալ հեքիաթներից: Տարբեր են միայն հեքիաթներում արծարծված գաղափարները: Առաջին հեքիաթում հեղինակը դրվատել է ուշիմությունն ու խելամտությունը, որոնց շնորհիվ ուլիկը փրկվում է մահից: Նման սյուժեով հեքիաթ ունեն Գրիմ եղբայրները («Գայլն ու յոթ ուլիկները»), որը, ի դեպ, ընդգրկված է Թունանյանի օգտագործած տարբերակների ցանկում: Գայլն իր խորամանկությամբ կարողանում է խաբել յոթ ուլիկներին, որոնք, յնայած մոր նախազգուշացումներին, ընկնում են գայլի թակարդը: Այն, ինչ չեն կարողանում անել յոթ ուլիկները միասին, անում է միայն նրանցից մեկը: Ուրեմն՝ կարևորը ոչ թե քանակն է, այլ որակը: Այս հանգամանքը գրավել է Հ. Տեր-Միրաքյանի ուշադրությունը. «Հայկական «Ուլիկը» ավելի խելացի է դուրս եկել գերմանական յոթ ուլիկներից և զոհ չի գնացել ազաի գայլի խարդավանքներին: Այս գրքույկը թե՛ իր բովանդակությամբ, և թե՛, մանավանդ, արտահայտության ձևով ավելի բարձր է առաջին երկուսից»² (հոդվածագիրը նկատի ունի Թունանյանի «Ճամփորդները» և «Ծիտը» հեքիաթները):

«Ճամփորդները» լավ դաս կարող է լինել փոքրիկների համար: Ճիշտ է, ողջ կենդանական աշխարհից աղվեսն առանձնանում է իր խորամանկությամբ, բայց միշտ չէ, որ հաղթում է: Ուժեղը միշտ էլ ճնշում ու նեղում է թույլին, բայց թույլերին էլ կարող են օգնել նրանց ուժեղ ընկերները: Խելացի արջորը ճանապարհի ճիշտ ընկեր էր ընտրել, սակայն զգուշությունը ոչ ոքի չի խանգարում: Դրա համար էլ նա ծառի վրա է գիշերում, որը և՛ ապահով էր, և՛ նման էր իր թառին: Բանահյուսական նույն սյուժեն մշակել է նաև ռուս գրող Կ. Ուշինսկին («Перык да собака»)³: Եթե Թունանյանի հեքիաթում աղվեսը «պու՛կ» փախչում է, ապա ռուսական տարբերակում դա նրան չի հաջողվում. շունը նրան պատռա - պատռա է անում: Չարը պատժվում է:

Քիչ ավելի մեծ՝ դպրոցահասակ մանուկներին են ուղղված «Գառնիկ ախպեր», «Չախչախ թագավորը» և «Կոնատ աղջիկը» հեքիաթները: Դպրոցահասակ երեխաներն աստիճանաբար սկսում են ճանաչել իրենց շրջապատող աշխարհն ու մարդկանց: Այս հրաշապատում հեքիաթները նախորդներից տարբերվում են ծավալով, արտահայտչամիջոցներով, լեզվով, կոմպոզիցիայով ու արծարծած գաղափարներով: Հեղինակն օգտագործել է գեղեցիկ համեմատություններ, մակդիրներ, սյուժեներն աչքի են ընկնում գործողությունների բազմազանությամբ:

«Գառնիկ ախպեր» և «Կոնատ աղջիկը» հեքիաթները պատմում են ժանրի համար ավանդական չարի և բարու պայքարի մասին. չարը պատժվում է: Լքված, հալածված ու անապավեն որբերը երջանակնում են, Լուսիկը մնում է իր միակ եղբոր և անձնվեր ամուսնու սիրելին:

«Գառնիկ ախպեր» հեքիաթի մեջ Հ. Թամրազյանը մեծ ընդհանրացում է տեսել. «Թունանյանը շատ քնական եղանակով ծուլում է հեքիաթայինը և իրականը, ինչ - որ չափով արձագանքում նաև մեծ կյանքի համանման երևույթներին:

¹ Նույն տեղում:

² Նույն տեղում, № 6 / 7, էջ 114 - 116:

³ Տե՛ս «Сказки русских писателей», М., 1985, էջ 254:

Հեքիաթ - պոեմն արտահայտում է նաև բանաստեղծի խիղճը որքերի, դժբախտների և առհասարակ Աստծո բոլոր արարածների նկատմամբ: Ծավալվում է որբության ցավը, նրբավորվում է անմայր և անհայր երեխաների վիշտը: Արյոյք նման չէ՞ դա հայ մանուկի անվերջ դեգերումներին, կոյած երեխաների տխուր ճամփաներին»⁶:

«Չախչախ թագավորը» հեքիաթն էլ ընթերցողին ուսուցանում է, որ անզամ կենդանին փոխհատուցում է իր համար արված լավության դիմաց:

«Կոնատ աղջիկը» հեքիաթում լավագույնս դրսևորվել է թումանյանական պատումի յուրահատկություններից մեկը:

Տարբեր ժողովուրդների բանահյուսության մեջ այս թեմայով բազմաթիվ հեքիաթներ կան: Ըստ հեղինակի կազմած ցանկերից մեկի՝ նա ձեռքի տակ ունեցել է հեքիաթի երեսուներեք տարբերակ: Գրեթե բոլոր տարբերակներում առկա է հարսի չար լինելու հանգամանքը:

Ռուսական «Косорыча» հեքիաթում գրված է. «Ախպերն ամուսնանում է, մի վիռլ, չար կախարդ կին է ուզում»⁷, իսկ մեկ այլ տարբերակում ասվում է. «Սա (որդին - Լ.Գ.) մի չար կին է ունենում, վերցնում է ու ձին բաց թողնում»⁸:

Իսկ Թումանյանը հեքիաթն սկսել է անկողնակալ, առանց հարսին բնորոշելու: Եվ դա պատահական չէ. եթե գրողը սկզբից տեղյակ պահեր հարսի չար լինելու մասին, ապա ընթերցողը նախապես նրանից միայն վատ բաներ կսպասեր: Բայց Թումանյանի ստեղծագործությանը ծանոթ յուրաքանչյուր ոք կվկայի, որ նա սիրում է, երբ ընթերցողը լարված հետևում է գործողությունների անակնկալ ընթացքին, ինչ - որ չափով նաև դրանց մասնակիցը դառնում: Դրա համար էլ հեղինակը գրել է. «Ախպերը պակվում է, կնիկ է բերում»:

Ընթերցողը ոչ մի վատ արարքի էլ չի սպասում: Բայց կատարվում է հակառակը: Հեղինակը քայլ առ քայլ ներկայացնում է չար հարսի նեցգ դիտավորությունները:

«Կոնատ աղջիկը» հեքիաթը որպես օրինակ ծառայեց, սակայն այս իրողությունն առկա է նաև այլ հեքիաթներում: Ինչպես գիտենք, Թումանյանի հեքիաթներին բնորոշ է «գործնական սկիզբը». հեղինակն առաջին իսկ տողերից բացահայտում է բուն նյութը, սակայն ամբողջովին չի սպառում այն: Որոշ մանրամասներ մնում են սքողված, որն էլ ընթերցողին ստիպում է համբերությամբ զինվել և ուշիուշով հետևել դեպքերի անակնկալ զարգացմանը: Հեքիաթի նախաբանից չի հետևում դեպքերի վախճանը, հեղինակը շարժում է ընթերցողի հետաքրքրությունը: Ասվածի լավագույն ապացույցը Թումանյանի երգիծական հեքիաթներն են, որոնց սկզբում ակնարկ անզամ չկա նրանց երգիծական բնույթի մասին: Երգիծանքը դրսևորվում է հեքիաթի գործողությունների զարգացմանը զուգընթաց («Օաջ Նազարը», «Կիկոսի մահը», «Անխել մարդը» և այլն): Թումանյանի երգիծական հեքիաթները, ուր հեղինակը ծաղրում է հասարակական կյանքի ու մարդկային արատները, անհասկանալի են մանուկներ համար: Ընթերցողը պատանեկան տարիքից նոր միայն կարող է ըմբռնել դրանցում արծաթոված գաղափարները, այն էլ ոչ լիովին, այլ մասամբ՝ իր աշխարհայացքին ու Ֆտահորիզոնի համապատասխան: Հեքիաթների բովանդակությամբ համապատասխան էլ փոխվում են դրանց լեզուն, արտահայտչամիջոցները: Երգիծական հեքիաթներում հեղինակը լայնորեն օգտվել է երգիծանքի միջոցներից՝ չափազանցությունից, հեզմանքից, դրության և խոսքի կոնֆլիկտից, օգտագործել է զեղեցիկ ու խոստում մակդիրներ, ծավալում հասնմատություններ: Սակայն պատանեկան միտքը չի կարող սպասել այն իրողություններն ու ընդհանրացումները, որոնք առկա են երգիծական հեքիաթներում: Դրանք բոլորովին այլ կերպ են ընկալվում առավել հասուն ընթերցողի կողմից: Միևնույն հեքիաթը տարբեր հասակի ընթերցողների կողմից տարբեր ձևով է ընկալվում: «Անհաղթ աքլորը» լսելիս կամ ընթերցելիս մանուկները հիանում են քաջ ու անհաղթ աքլորի

⁶ Հ. Թամրազյան, Հ. Թումանյան, Բանաստեղծը և մտածողը, Եր., 1995, էջ 343:

⁷ Երկչե Զարեհի անվան գրականության և արվեստի թանգարան, Թումանյանի արխիվ, № 125, էջ 1:

⁸ Նույն տեղում, էջ 3:

համարձակությամբ: Իսկ առավել հասուն տարիքի ընթերցողը կարող է տեսնել ավելին: Հեղինակը ծաղրում է իշխողներին, ծաղկուն նրանց ազահությունը: Կամ՝ «Եղեմական ծաղիկը» հեքիաթը մանուկ ընթերցողի համար սոսկ մի կախարդական պատմություն է, որն ավարտվում է չար հրեշի՝ Սպիտակ դևի կործանումով և Արի - Արմանելիի՝ բարու հաղթանակով: Սակայն հրաշապատում այս սյուժեում խոր իմաստ կա թաքնված, որը հասանելի չէ փոքրերին: Հեղինակի մպատակը միայն հրաշապատում անցքեր ներկայացնելը չէ: Հեքիաթում տեղ են գտել հավիտենական սիմվոլներ: Հերոսները խորհրդանշում են գարնան ու ծմռան հաջորդականությունը: Հեքիաթի գլխավոր հերոսուհուն՝ Ծաղիկի կերպարի էությունը բացահայտելու և ճիշտ ներկայացնելու համար նա դիմել է ասորական, եգիպտական ժողովուրդների դիցաբանությանը, մամուլություններ ու տարբերություններ է գտել այդ ժողովուրդների մեռնող և հարություն առնող աստվածությունների միջև, որոնց միջոցով ժողովուրդը բացատրել է տարվա եղանակների (հատկապես գարնան և ծմռան) պարբերական հաջորդականությունը:

Կան փիլիսոփայական ընդհանրացումներ և կենսական ճշմարտություններ պարունակող այնպիսի խորիմաստ հեքիաթներ, որոնք հինգ - վեց տասնյակ տարիներ ապրած, կյանքի փորձով իմաստնացած ընթերցողներն էլ չեն կարողանում ամբողջովին ընկալել:

Դրանք մշտապես մտածելու, խորհելու և կշռադատելու տեղիք են տալիս (ինչպես՝ «Ոսկու կարասը», «ժոռող ձուկը», «Քեֆ անողին քեֆ չի պակսիլ», «Քաջ Նազարը»):

Բովանդակությամբ, արտահայտչամիջոցներով, ինչպես նաև բառապաշարով ժողովրդական լինելով հանդերձ՝ Թումանյանի հեքիաթները միաժամանակ յուրօրինակ ու հեղինակային են պատմմի առանձնահատկությունների շնորհիվ. մեծ է հերոսների ուղղակի խոսքի տեսակարար կշիռը, իսկ հեղինակային խոսքը հասնում է մվագագույնի: Հեքիաթները գերծ են նկարագրական, դատողական ու բարոյախոսական երկարաշունչ հատվածներից, ներկայացնում են գործողությունների հաջորդական զարգացման պատկերներ, ուր պարզորոշ երևում է պատկերների հաջորդականության ոլիթը:

Ճիշտ է, հեքիաթներում հեղինակային խոսքը չի գերակշռում, սակայն ոճավորված պատմումն նկատելի են ոչ միայն հերոսներն ու իրադարձությունները, այլև պատմողը, որն ուղղակիորեն հանդես չի գալիս իր դատողություններով ու եզրակացություններով, քանի որ հեքիաթի դեպքերը կատարվել են անորոշ ու հեռավոր ժամանակներում («Ժուկով - ժամանակով»), և դեռ հարց է՝ կատարվե՞լ են արդյոք («Լինում է, չի լինում»), սակայն հեքիաթի պատմմից, հերոսների արարքների նկատմամբ անուղղակիորեն դրսևորված վերաբերմունքից ուրվագծվում է պատմողի կերպարը, որը ժողովրդական իմաստության և դարավոր կենսափորձի կրողն է: Պատմող - ակնատեսի կերպարը, ինչպես արդեն նշվել է, բնորոշ չէ հեքիաթի ժանրին, սակայն բացառություն է կազմում դրության և խոսքի կոմիզմի հիման վրա կառուցված «Սուտլի որսկանը» զվարճապատում հեքիաթը, ուր հեղինակը ներկայացվող իրադարձությունների ակնատես - մասնակիցն է: Ընթերցողն ամենուր գգում է հեղինակի ներկայությունը: Նա տագնապում է խեղճ որբերի ճակատագրի համար («Գառնիկ ախպերը»), իր հնարամիտ հերոսների հետ միասին պատկազերծ է անում ազաի իշխողներին («Ոսկու կարասը», «Տերն ու ծառան») և այլն), բերկրում ու ցնծում է դաժան փորձությունների ենթարկված Լուսիկի երջանկության համար («Կոնատ աղջիկը»), մտերմաբար ծիծաղում է խեղքից պակաս իր հերոսների անհեթեթ արարքների վրա («Կիկոսի մահը», «Անբան Հուրին»): Հեղինակ - պատմողի համակարանքը բարի, աշխատասեր, հնարամիտ հերոսների կողմն է (Լուսիկը, Արի - Արմանելին, քեֆ-չի Հասանը), իսկ անշնորհք, ալարկոտ, չար, ազաի ու անխելք հերոսներին (Նազարին, Հուրին, Փամուսին) նա հեզմում, դատապարտում կամ սպանիչ ծաղրի է ենթարկում:

Հեքիաթներում հեղինակի անուղղակի ներկայության հանգամանքը գրավել է ռուս գրականագետ, հեքիաթի ժանրի քաջ գիտակ Վ. Անիկինի ուշադրությունը. «Հեքիաթները գործող անձերի, գործողությունների և իրադարձությունների մասին օբյեկտիվ պատմություններ են: Այնտեղ չկան «հեղինակային շեղումներ», փոքրիշատե ամբողջական բացատրություններ այն մասին, թե ինչպես են գործում հերոսները. ինչ է նրանց հետ կա-

տարվում: Հեքիաթը մնում է որպես երրորդ դեմքով պատմվող պատմություն, սակայն հեքիաթային պատումից պատմողի արտաքուստ կտրված լինելը խաբուսիկ է: Նա միշտ արտահայտում է իր սուրբեկտիվ վերաբերմունքը հերոսների և իրադարձությունների մասին, չնայած այն չի դրսևորվում ուղղակի գնահատության, կարծիքի միջոցով»⁹:

Նա նկարագրություններն ու պատմողի դատողությունները համարում է հեքիաթի կոմպոզիցիայի կարևոր բաղադրամասեր. «Հեքիաթում, ինչպես մեծախոսության մեջ, կարելի է առանձնացնել պատումը (պատմություն իրադարձությունների մասին) և երկխոսություն-տեսարանները: Դրանց հերթակալությանը որոշվում է բանավոր «տեքստի» կոմպոզիցիան: Կոմպոզիցիայի մյուս բաղադրամասերը՝ պատմողի դատողություններն ու նկարագրությունները, կարճ են և, որպես կանոն, մեկ - երկու նախադասությամբ են համդես գալիս»¹⁰:

Ռուս գրականագետն իրավացիորեն նկատել է, որ ոչ մի պատմող անմասն չի մնում հեքիաթի գործողություններից. «Բոլոր հեքիաթասացներն, առանց բացառության, խորատուզվում են հերոսների և այն իրադարձությունների աշխարհը, որոնց մասին իրենք պատմում են»¹¹:

Պատումը բանավեժտային կարևոր հատկանիշ է, որը խոսքն օժտում է տվյալ գրողի ռճային ինքնատիպությամբ: Ժամանակակիցների վկայությամբ՝ Թումանյանը շատ հետաքրքիր պատմող է եղել, և դա դրսևորվել է նրա ստեղծագործություններում: Նրա դրամատիկ երկխոսությունները և ընդհանրապես ողջ պատումը գերծ են ավելորդ բառերից: Թումանյանին բնորոշ է կենդանի, աշխույժ, հումորով համեմված պատմելածը: Թումանյանի պատումի ժողովրդական բնույթը հեքիաթներում դրսևորվել է ոչ միայն առատորեն կիրառված ժողովրդախոսակցական բառերի, այլև քերականական ձևերի, արտահայտությունների, դարձվածքների, ինչպես նաև շեշտադրության միջոցով: Հեղինակի խոսքն իր ռճային առանձնահատկություններով միահյուսվում է հերոսների խոսքին:

Թումանյանի պատումին բնորոշ են նաև կոմպոզիցիոն ընդմիջարկումները, որոնք ևս գալիս են ժողովրդական հեքիաթներից: Պատումի միջոցով դրսևորվում է հեղինակի կերպարը, որը սյուժետային ընդհատումները կապելու համար գրում է. «Մրան էստեղ թողնենք իր երեխիս հետ ու հիմի ու՛մնից տեղեկություն տանք. հիմի տեղեկություն տանք բազավորի տղիցը» («Կոնատ աղջիկը»), կամ՝ «Սա էստեղ թող մոնչա, մենք զնանք Ծաղիկի ետևից, տեսնենք՝ էն կախարդական դռնից որ մտավ, ինչ եղավ» («Եղեմական ծաղիկը») և այլն:

Ժողովրդական հեքիաթները ողողված են ման բազմաթիվ օրինակներով, ինչպես՝ «Խաբարը տանք տղերանցը», «Խաբարը տանք պուճուր ախպորիցը», «Թող էս մարթիքը իրար հետ թագա կոխվ անեն, մենք խաբարը տանք տղիցը», «Դառնանք Գալոյին, ուր տղերեն: ուն», «Թող կարա - վագիրը շքոնա իրան պաշտօնով ծառայի, խաբարը տանք ծիյապանրին» և այլն:

Հեղինակի այսօրինակ կոմպոզիցիոն միջամտությունները երկու նպատակ են հետապնդում. շաղկապում են սյուժետային գծի ընդհատումները՝ միաժամանակ սեղմելով գեղարվեստական ժամանակը:

Թումանյանական պատումի կարևոր առանձնահատկություններից է նաև հակիրճությունը: Հաճախ պատումի նույնիսկ կարևոր, հանգուցային դրվագներից շատերը չեն ներկայացվում, սակայն առավելագույն սեղմ շարադրանքի միջոցով հեղինակը հաղորդում է ավելին: Սա մի յուրահատուկ գեղարվեստական հնարանք է, որն ընթերցողին պահում է մշտաբոն վիճակում, նրան հեքիաթի գործողությունների մասնակիցն է դարձնում և յուրովի ստեղծագործելու հնարավորություն է ընձեռում: Դրա լավագույն հաստատումը «Չախորդ Փանոս» հեքիաթն է, որն առեղծվածային և ընթերցողի համար բազում հարցականներով լի վերջաբան ունի. ի՞նչ եղավ խեղճ ու կրակ Փանոսը: Արդյոք վայրի

⁹ В. Аникин. Русская народная сказка. М., 1984, с. 128.

¹⁰ Նույն տեղում, էջ 141:

¹¹ Նույն տեղում, էջ 128:

գազանների բաժին դարձա՞վ, թե՞ հրաշքով դասավորեց իր ճակատագիրը (վերջին վարկածը չի համապատասխանում հեքիաթի բովանդակությանը):

Նույն ձևով ընթերցողին անհայտ է մնում նաև «Անհաղթ աքլորը» հեքիաթի թագավորի ճակատագիրը. մի՞թե նա իր ազահության համար կյանքով հատուցեց: «Կացին ախպերը» հեքիաթը ևս մասամբ անավարտ է մնում. կնիցին ախպոր կատարած ավերածություններից սարսափած գյուղացիք վազում են նրա տիրոջ ետևից, որ գա՞ նրան բան հասկացնի: Բայց ընթերցողն այդպես էլ չի իմանում՝ նրանք գտա՞ն կացնի տիրոջը, ազատվեցի՞ն այդ աղետից, թե՞ շարունակում են նորանոր փորձանքների ենթարկվել: Թունանյանական պատումի այս առանձնահատկությունը բնորոշ է ոչ միայն հեքիաթներին, այլև ստեղծագործական մյուս ժանրերին, օրինակ՝ պոեմներին («Անուշ», «Թմկաբերդի առու՝ մը» և այլն): Բերված օրինակները հաստատում են, որ սա ոչ թե պատահականորեն դրսևորված գեղարվեստական հնարանք է, այլ կայուն ստեղծագործական սկզբունք, որը պայմանավորված է հեղինակի լեզվամտածողությամբ:

Լ. Գ. ГАБРИЕЛЯН — Особенности повествовательной манеры Туманяна в сказках. — В статье рассмотрены особенности повествовательной манеры в сказках Туманяна (сочетание простого сюжета с глубоким подтекстом, изобретательность языка и художественных средств изображения, неожиданное развитие событий, невольным участником которых становится и читатель, стилизованное изложение и т.д.).

Для Туманяна характерна живая, ритмическая форма изложения, чувство юмора. Восприятие сказок Туманяна сильно зависит от уровня развития читателя.